

### ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ

#### ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ՆՎԵՐՆԵՐԸ

ՍՍՌՄ լայնատարած երկրի ժողովուրդները, ինչպես և ողջ պրոպրետարի մարտկոթյունը, մեծ խանդավառությամբ ու արժանավայել կերպով նշեցին ժողովուրդների հանձարեղ առաջնորդ Ի. Վ. Ստալինի ծննդյան 70-ամյակը:

Այդ պանծալի հոբելյանը փառահեղ նշեց նաև հայ ժողովուրդը: Ի. Վ. Ստալինի նկատմամբ հայ ժողովուրդի առձան սիրո և հարգանքի վառ արտահայտությունը հանրիստեղծ են այն նվերները, որոնք հայ ժողովուրդը, իր ներկայացուցիչների միջոցով, ուղարկել է մեծ Ստալինին: Այդ նվերներից, առանձնապես, հիշատակության արժանի են հետևյալները:

Նվերների մեջ են արծաթագործ Վահան Հացագործյանի լավագուրն ստեղծագործություններից մեկը՝ «Նաղաղության նավը»: Նավը պատրաստված է արծաթյա հյուսվածքից: Նավի շուրջը զարդանկարներով պատկերված են սոցիալիստական արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, գիտությունը, կուլտուրան և արվեստը: Նավի շուրջը ընդերքային և թանկագին անյուրուսի Ցոտկը ներկայացնում է խաղաղության սիմվոլը՝ աղավնին: Արծաթյա առաքատը զարդարված է հայկական ժամանակակից ու կլասիկ օրնամենտներով և զանազան մըրզերի պատկերներով: Առաջատի ներքևում բարձրանում է արևը, իսկ նրա վերևում դրված է խաղաղության փարոս՝ Մեծ Ստալինի ոսկեգոծ տիմանկարը: Խաղաղության նավը բերում է ցորենի հասկեր և ծաղիկներ՝ իրըն ստեղծության, խաղաղության ու երջանկության խորհրդանշանի: Կանաչ պրասակված է հնգաթև կարմիր աստղով ու Սովետական Միության դրոշակով՝ պարզությամբ ծաղկեպատկով:

Մեր լավագույն վարպետներից մեկը՝ հյուան Հակոբ Ազատյանը, տանձնու փայտի վրա կատարել է մի գեղեցիկ փորագրու-

թյուն՝ «Սոցիալիստական դաշտերում»: Այս հրաշալի աշխատանքը պատկերում է Սովետական Հայաստանի գյուղատնտեսությունը: Հեռվում Արարատյան լեռն է, որի առջև տարածվել է Արարատյան դաշտավայրը: Եվ այդ Ֆոնի վրա պատկերված է սոցիալիստական անասնապահությունը, փորագրված են անասնապահական Ֆերման, ոչխարների հոտը, կիթը, կաթը գործարան տեղափոխելը և այլն:

Արծաթագործ փորագրող Հրաչյա Ստեփանյանը պատրաստել է հոբելյանական մի հիանալի վազա: Վազան պատրաստված է արծաթից և արտահայտում է հայ ժողովուրդի տնտեսական ու կուլտուրական կյանքի ծաղկումը: Վազայի վրա փորագրված են Սովետական Միության 16 ռեսպուբլիկաների սեփական փերերը: Հոբելյանական վազան զարդարված է հայկական ժամանակակից և կլասիկ ճարտարապետության օրնամենտներով:

Բարձրարվեստ մի գործ է հանդիսանում նաև նշանավոր քանդակագործ Տարազորոսի քարից պատրաստած վազան, որի վրա փորագրված են ՍՍՌՄ 16 ռեսպուբլիկաների գերբերը և գեղեցիկ այլ քանդակներ:

Ստալինի ծննդյան 70-ամյակի նկատմամբ իրենց սիրո և երախտագիտության զգացմունքը արտահայտեցին նաև մեր հայրենադարձ վարպետները: Այսպես, հայրենադարձ վարպետ Նարգիզյանը կերտել է առաջնորդի վրիպանդին. արքա աշխատանքը կատարված է վերին աստիճանի խնամքով ու նուրբ ճաշակով: Կիսանդրին ամբողջությամբ պատրաստված է պղնձյա թերթից՝ քանդակագրված միջոցով և իրենից ներկայացնում է մի շարժական ինքնատիպ գործ: Աշխատանքը ցույց է տալիս հմուտ և նրբաճաշակ վարպետի կարողություն:

Բարձրարվեստ գործ են նաև մյուս նվերները:

#### ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փետրվարի 4-ից, Հայկական ՍՍՌ-ում, սկսվեց ՍՍՌ Միության Գերագույն Սովետի դեպուտատության թեկնածուների առաջադրումը: Ինսպուբլիկայի քաղաքներում և գյուղերում մեծ խանդավառությամբ տեղի

են ունենում նախընտրական ժողովներ: Ժողովուրդը դեպուտատության թեկնածու է առաջադրում իր լավագույն զավակներին, վառ հայրենասերներին, որոնք աչքի են ըն-

կել իրենց նվիրված աշխատանքով և սիրված են բոլորի կողմից:

Հայ ժողովրդի առաջադրած թեկնածունի-րի մեջ առաջինը Մեծ Ստալինն է, հայ ժողովրդի ազատարարը, որի հոգատարության շնորհիվ ծաղկել և բարգավաճել է մեր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը:

Հայ ժողովրդի առաջադրած թեկնածունի-

րի շարքում են Սովետական հասարակու-թյան աչքի ընկնող և սիրված զավակները՝ Անաստաս Միկոյանը, Գրիգոր Հարություն-յանը, Սահակ Կարապետյանը, Մացակ Պսպյանը և այլ անձինք:

Ընտրությունը տեղի պիտի ունենա մարտի 12-ին:

### ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՐԿՆԱԿԻ ՇԵՐՈՍ ՆԵՒՍՈՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Աշխատավորների դեպուտատների Երևա-նի քաղաքային Սովետի գործկոմի որոշ-մամբ ակալված է Սովետական Միության կրկնակի հեղուս Նելսոն Ստեփանյանի հու-շարձանի շինարարությունը:

Հուշարձանը դրվելու է Ստալինի անվան պողոտայի և Բաղրամյանի փողոցի հատ-

ման վայրում գտնվող պուրակում:

Նելսոն Ստեփանյանի բրոնզե կիպանդրին բանդակում է արվեստի վաստակավոր գոր-ծիչ Արա Սարգսյանը: Հուշարձանի պատ-վանդանը կառուցվելու է ճարտարապետ Գ. Աղաբաբյանի նախագծով:

### „ՇԵՐՈՍՈՒՅԻ ՄԱՅՐ“ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄԸ ՀԱՅՎԱԿԱՆ ՍՍՈՒՈՒՍ

ՍՍՈՒ Միության Գերագույն Սովետի Նա-խագահության հունվարի 12-ի հրամանա-գրով, 10 և ավելի երեխա ծնած ու դաստիա-

րակած 13 մայրերի շնորհիվ են «Շերոսու-հի մայր» շքանշաններ և ՍՍՈՒ Միության Գերագույն Սովետի Նախագահության պատ-վոգրեր:

### ԸՆԴԱՐՁԱՎՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԻ Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

ՍՍՈՒ Միության կառավարության որոշ-մամբ Երևանում Պետական համալսարանի համար կառուցվելու են մի քանի շենքեր՝ ռատոնական ընդարձակ շենք, գրադարան (600.000 հատոր գրքի համար), ուսանողա-կան հանրակացարան (1,000 ուսանողի հա-մար), դաստիարակների բնակելի շենք և այլն: Կոմպլեքսային այդ շենքերի կառուցման պլանը հաստատված է:

Երևանի Քաղաքային սովետը համալսա-րանի շենքի համար ընդարձակ հողամաս է տրամադրել Այգեատանի փողոցի վրա:

Նախատեսված է համալսարանի շենքերի կառուցման վրա ծախսել 45 միլիոն ոտբլի: Համալսարանի նոր շենքերի կառուցումը հնարավորություն կտա ուսանողների թիվը հասցնել 3,000-ի:

### ԽԱՂՈՂԻ ՆՈՐ ՏԵՍԱԿՆԵՐ

Գիտությունների թեկնածու Ս. Պողոսյանը խաչաձևել է «Սպիտակ իծապտուկը» «Վար-դագույն Երևանի» հետ և ստացել է խաղո-ղի նոր տեսակ, որի պտուղները ըստ գույնի

նման են «Վարդագույն Երևանիին», իսկ ըստ ձևի՝ «Արարատ» տեսակին: Ս. Պողոսյանը սերմերը ցանելու միջոցով ստացել է խաղո-ղի մի այլ տեսակ ևս՝ «Կարմիր կախանի»:

### Պ Ա Ր Գ Ե Վ Ա Տ Ր ՈՒ Մ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության հրամանագրով Ստորին Զանգվի շրջանցքի շինարարության մեջ աչքի

ընկած 70 բանվորներ, կոլլեկտիվիկներ և ինժեներա-տեխնիկական աշխատողներ պարգևատրվել են Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի պատվոգրերով:

### Պ Ա Ն Ր Ի Ն ՈՐ Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն

Հայկական ՍՍՌ Մանդենի և Կաթնեղենի արդյունաբերության Միևտարությունը Միկոյանի շրջանում կառուցում է սրանրի հսկա գործարան: Եննքի հիմնադրման աշխատանքներն

արդեն ավարտված են: Գործարանը շահագործման կհանձնվի այս տարի: Նա կարտատրի մի քանի տեսակ բարձրորակ պանիր:

### Ն Ո Ր Շ Ր Ջ Ա Ն Ա Վ Ա Ր Տ Ն Ե Ր

Օրենսդիր Գյուլյատնտեսական ինստիտուտը օրերս տվեց իր նոր շրջանավարտները, թվով՝ 130 մասնագետ: Այգե-պտղաբանչարսբուծական ֆակուլտետը ավարտեց 91 ե-

րիտասադո մասնագետ, իսկ ագրոնոմիականը՝ 39: Նոր ավարտածները նշանակված են աշխատանքի ռեսպուբլիկայի շրջաններում:

### Ե Ր Ա ժ Շ Տ Ա Վ Ա Ն Ն Ո Ր Ա Տ Ե Ղ Ծ Ա Գ Ո Ր Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ստալինյան մրցանակի լաուրեատ կոմպոզիտոր Արեքանդր Հարությունյանը ավարտել է Կոնցերտ ձայնի համարող իր նոր ստեղծագործությունը, որը գրված է բանաստեղծ Սարմենի տեքստի հիման վրա: Կոնցերտը բաղկացած է 3 մասից:

Հարությունյանի նոր ստեղծագործությունը լավել է և քննարկվել Հայաստանի Սովետական Կոմպոզիտորների Միության ստեղծագործական սեկցիայում և արժանացել հավանության:

### Յ Ո Ր Ե Ն Ի Ն Ո Ր Տ Ե Ս Ա Վ Ն Ե Ր

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գիտահետազոտական ինստիտուտները ստացել են բարձր բերք տվող ցորենի նորանոր տեսակներ: Այսպես, ստացված է ցորենի «Արմենուհի» տեսակը, որը բարձր բերք է տալիս հայկական խոնավ լեռնային շրջաններում (փորձարկվել է Ստեփանավանի և Կալինինոյի շրջաններում):

Ինչ շրջաններում (փորձարկվել է Եղվարդի փորձադաշտում):

Մեծ հեռանկարներ է խոստանում ցորենի «Արտաշատի 42» տեսակը, որը նույնպես բարձր բերքատու տեսակ է ցածրադիր տաք բամբակեցան շրջաններում:

Ստացված ցորենի նոր տեսակները բազմաքանակ և տարածված են Հայկական ՍՍՌ-ում:

### Հ Ա Յ Գ Ր Ո Ղ Ն Ե Ր Ը Ռ ՈՒ Ս Ե Ր Ն

Մոսկվայի գեղարվեստական գրականության պետական հրատարակչությունը լույս է ընծայել Ա. Շիրովանդարեի «Հատրնտիրը» ռոսերեն լեզվով՝ Հ. Խաչատրյանի թարգմանությամբ: «Հատրնտիրը» մեջ մտել են՝ «Բատրը», «Նամուրը», «Զար ոգին», «Արտիստը», «Պատվի համար» դրաման և մի շարք այլ գործեր:

Նարդուսի պատմվածքների ու փխպակների միհատորյակ, որի մեջ մտել են՝ «Ընչպես բժշկեցին», «Մազուկն ուխտ գնաց», «Հոգուն վրա հասավ», «Հոպոպ», «Թե ինչ եղավ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակասեց», «Մե փողերի տոկոսը», «Աղամամիին» պատմվածքները և «Սպանված աղապինին», «Տանտիրոջ սուղիկը» վիպակները:

Ռուսերեն լեզվով լույս է ընծայվել նաև

### „ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՌՁԵՈՒՆ ԲԱՌԱՐԱՆ“

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մատի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցները կազմում են «Արդի հայերենի առձեռն բառարան», որը ամփոփելու է արևմտահայ և արևելահայ գրական լեզուների բառաքանձը: Բառարանում մեծ տեղ

պիտի տրվի սովետական շրջանի բառամիջերին: Բառարանի կազմման աշխատանքների մեծ մասը արդեն կատարված է: Հավաքված է ավելի քան 80 հազար բառ: Արդի հայերենի առձեռն բառարանը ունենալու է 100.000-ից ավելի բառ:

### ՀԱՅՎԱԿԱՆ ԱՌԱՇՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հարկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Արեղյանի անվան լեզվի ինստիտուտի ժողովրդական բանահյուսության սեկտորը կազմել է հայ ժողովրդական առածների համահավաք ժողովածու, որն ընդգրկում է շուրջ 40,000 առած և ասացվածք: Ժողովածուի նյութերը հավաքված են հրատարակված ավագագրական հավաքածուներից, պարբերական մամուլից, անհատ բանահավաքների ձեռագիր արխիվներից: Օդատագործված են նաև սեկտորի կազմակերպած

արշավախմբերի ընթացքում գրի առած նյութերը:

Ժողովածուն կազմված է բոլորովին նոր սկզբունքով, առածները դասավորված են ըստ իմաստների ու թեմաների և այբբենական կարգով:

Ժողովածուն ունենալու է համապատասխան գիտական բառարան, առածների տարածման աշխարհագրական քարտեզ, ծանոթություններ և այլն:

### ՀԱԿՈՒ ԿՈՋՈՅԱՆԻ ՍՏԵՆՍԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈ

Հայաստանի Ստալինական Կերպարվեստագեաների Միությանը և Արվեստի աշխատողների տունը հունվարի 12-ին կազմակերպեցին ժողովրդական նկարիչ Հակոբ Կոջոյանի ստեղծագործությանը նվիրված երեկո: Հանդեսին ներկա էին նկարիչներ, դերասաններ, գրողներ և ուսանողներ, որոնք

չերժորեն ողջունեցին ականավոր վարպետ, ժողովրդական նկարիչ Հակոբ Կոջոյանին: Նրա ստեղծագործական աշխատանքների մասին ղեկուցեց Ե. Մարտիկյանը: Արվեստի աշխատողների տան դահլիճում ցուցադրվեցին Կոջոյանի գրաֆիկ գործերից լավագույն նմուշներ:

### ՀԱՅՎԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի աղբյուրներ գործող Հայկական Աշխարհագրական Ընկերությունը իր գիտական աշխատանքում փնտրումացնում է հայ քարտեզագրության եզակի նմուշները: Օդեսայի Համալսարանի Աշխարհագրական ֆակուլտետից ընկերությունը նախ է ստացել 1695 թվին հրատարակված առաջին հայերեն տպագիր քարտեզը: Երևանում ձեռք են բերվել հայերեն առաջին մեծադիր գլոբուսը, առաջին ատլասը և այլն:

Հայկական աշխարհագրական ընկերությունը ներկայումս կազմում է Սովետական Հայաստանի անվանացուցակը, որը հիմք է ծառայելու Հայկական ՍՍՌ աշխարհագրական քարտեզների համար: 1950 թվականին պետք է հրատարակվի բառարանի առաջին պրակը:

Աշխարհագրական բառարանման հանձնաժողովը ճշտել է Սովետական Հայաստանի 400-ից ավելի լեռների, գետերի ու լճերի անունները:

### ԱՅԳԻՆԵՐԻ ԸՆԴՍՐՁԱԿՈՒՄԸ

Այս տարի վերջում, Կոտայքում, Էջմիածնում, Հոկտեմբերյանում, Արտաշատում և ռեսպուբլիկայի այլ շրջաններում տնկվելու են մի քանի հազար հեկտար տարածությամբ խաղողի նոր այգիներ:

Ավելի քան 1,200 հեկտար պտղատու այ-

գիներ են հիմնվել Ախտայի, Բասարաբչաքի, Մարտունու, Ապարանի և այլ շրջաններում: մոտ 300 հեկտար տարածության վրա տնկվել են ընկուզենու, կաղիճի, նուսն, թզի, սերվեխի, պիտատակի և մերձարևադարձային այլ կուլտուրաների այգիներ:

### ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Մոսկվայում, Հայաստանի կոլտուրայի տանը, բացվել է Հայաստանի ժողովրդական նկարիչ Փ. Թերլեմեզյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը, որը մեծ հետաքրքրությամբ դիտում են մոսկվացիները:

Թերլեմեզյանի ստեղծագործությունների ցուցահանդեսում ներկայացված է 100 գործ, այդ թվում նրա «Լուսյա հովիվը» և «Գործազուրկները Լոնդոնում» հայտնի ստեղծագործությունները: Ցուցահանդեսում մեծ տեղ են գրավում Մովսեսիան Հայաստանը պատկերող նկարները, որոնց մեջ ուշադրություն են

գրավում «Ներկայացված կամուրջի կառուցումը» և «Զորագէտյան պեյզաժները», որոնց մեջ նշանավոր նկարիչը վարպետորեն վերարտադրել է Հայաստանի վերափոխումը և սովետական մարդկանց ստեղծագործ աշխատանքը:

Ցուցահանդեսում ներկայացված են նաև Թերլեմեզյանի բազմաթիվ մատիտանկարները: Դրանց մեջ են Մովսեսիան Հայաստանի գյուղատնտեսության, արդյունաբերության, գիտության և կոլտուրայի ներկայացուցիչների դիմանկարները:

### ՎԵՑ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԾԱՅՐԱՄԱՍԵՐՈՒՄ

Սկսվեց դպրոցական վեց խոշոր շենքերի շինարարությունը: Դպրոցական շենքեր են կառուցվում Նոր Արեշում և Արգեստանում: Ճարտնապետները և երկու դպրոցական շենքերի

շինարարությունը Մամիկոնյանի և Բաղրամյանի փողոցների վրա: Այս տարի սովորողները կստանան 6 նոր դպրոցական հիանալի շենքեր:

### ՆՈՐԱՎԱՐՑ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ԱՄՈՒՐԱՆՏԸ

1946 թվին Թեհրանից Հայաստան վերադառնալով Ռաֆիկ Առաքելյանը ընդունվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Երկրաբանական ինստիտուտի ասպիրանտուրան: Նրա գիտական ղեկավար նշանակվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, նշանավոր երկրաբան Կ. Պաֆֆենհոլցը, որը 25 տարի անընդհատ աշխատում է Մովսեսիան Հայաստանում: Նրա ղեկավարությամբ Ռաֆիկ Առաքելյանը գրել է 3 գիտական աշխատություն, որոնք տպվել են Ակադեմիայի տեղեկագրերում: Հայրենադարձ ասպիրանտուրան անցած, Երեքական ամսով, գործուղվել է Լենինգրադ և Մոսկվա: Նա մասնակցել է

Երկրաբանական Ինստիտուտի գիտական արշավախմբերին և հետազոտական այլ աշխատանքներին: Ռաֆիկ Առաքելյանին դիսերտացիայի համար նյութեր հավաքելու ընթացքում մասնագիտական օգնություն են ցույց տվել ինստիտուտի աշխատակիցները: Առաքելյանը ավարտել է ասպիրանտուրան և շուտով կենդանացել իր դիտարագիտական (գիտական շարադրությունը) հասարակական պաշտպանության:

Հայրենիքի կենսատու արևի տակ, հոգատար միջավայրում, հայրենադարձ շնորհալի և աշխատասեր երիտասարդը կարողացել է հասնել գիտության լուսաշող բարձունքներին:

### ՀԻՇԱՐԺԱՆ ՀՈՔԵԼՅԱՆՆԵՐԻ ՆՇՈՒՄՆԵՐ

### ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻ ՀՈՔԵԼՅԱՆԻ ՆՇՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒՅՑՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Հունվարի 6-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայում խոեղի ունեցավ Ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված Սովետական ակնավոր լեզվաբան ակադեմիկոս Նիկողայոս Մառի ծննդյան 85-ամյակին և մահվան 15-ամյակին:

Նիստերի դահլիճ էին հավաքվել ակադեմիայի իսկական անդամներ, թղթակից-ան-

դամներ, լեզվաբաններ, պատմաբաններ, գրականագետներ, հնագետներ և գիտության այլ ասպարեզի ներկայացուցիչներ:

Նիստը բաց արեց և ներածական խոսք ասաց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը: Նա ընդհանուր գծերով բնութագրեց Մառին որպես սովետական լեզվաբանու-

թյան, պատմագիտության և հնէաբանության  
մեծագույն ֆերիկայացուցչի:

Այնուհետև, «Մառը սովետական լեզվա-  
բանության հիմնադիր» թեմայով հանդես ե-  
կավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակա-  
միայի թղթակից-անդամ Արարատ Ղարիբջա-  
նը: Զեկուցողը ցույց տվեց Մառի գիտական  
ստեղծագործության դժվարին ուղին և նրա  
պայքարը ընդդեմ հնդեբրոպաբանական լեզ-  
վագիտության հետադեմ տեսությունների:  
Մառը միակ խիզախ գիտնականն է, նշեց զե-  
կուցողը, որը դեմ տեսելով հնդեբրոպաբանու-  
թյունը, ստեղծեց լեզվի նոր ուսմունք: Նա  
միտեց «Նախալեզվի» փտած տեսությունը և  
գիտականորեն ապացուցեց, որ լեզուն կապ-  
ված է մտածողության հետ և առաջացել է  
մարդու աշխատանքային ու հասարակական  
հարաբերությունների ընթացքում:

«Նիկողայոս Մառը որպես հնագետ-պատ-  
մաբան» թեմայով զեկուցում կարդաց պատ-  
մական գիտությունների թեկնածու Բ. Առա-  
քելյանը: Զեկուցողը նշեց, որ Մառը մեծ  
գործ է կատարել բացահայտելու Կովկասի և  
հարևան ժողովուրդների պատմության ու  
կոլտուրայի ընդհանուր գծերը՝ ցույց տալով

այս կամ այն ժողովրդի մուծած ավանդը  
մարդկային ընդհանուր կոլտուրայի գանձա-  
բանում: Մառը տարբերություն չի դրել փոքր  
ու մեծ ժողովուրդների և նրանց լեզուների  
միջև, բոլորն էլ համարելով գիտության հա-  
մար հավասարապես կարևոր: Որպես պատ-  
մաբան, Մառը յուրաքանչյուր բառ համարել  
է պատմական մի հուշարձան՝ կապելով այն  
սովյալ ժողովրդի կյանքի և մտածողության  
հետ:

Զեկուցողը ծանրացավ Մառի այն կարևոր  
դրույթի վրա, որով հիմնովին հերքվում է  
հայերի եկվոր լինելու հակագիտական թեզը:  
Մառը գիտականորեն ապացուցել է, որ հա-  
յերը եկվորներ չեն, այլ կազմավորվել են  
տեղում, բազմաթիվ ցեղերի ու տոհմերի  
խառնուրդից և հայոց լեզուն էլ տեղի ցեղերի  
ու տոհմերի լեզուների խաշավորումից կազ-  
մված մի լեզու է:

Հետաքրքրությամբ լսվեց բանասիրական  
գիտությունների թեկնածու Արամ Ղանալան-  
յանի զեկուցումը՝ «Նիկողայոս Մառը և հայ-  
կական բանահյուսության ուսումնասիրու-  
թյան հարցերը» թեմայով:

**ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵՎՈ**

Հոնվարի 17-ին, Հայաստանի Սովետա-  
կան Գրողների Գիտության տան դահլիճում,  
տեղի ունեցավ երեկո՝ նվիրված հայ նշա-  
նավոր բանաստեղծ Վահան Տերյանի մահ-  
վան 30-ամյակին:

Երեկոյին ներկա էին գրողներ, արտիստներ,  
ուսանողներ և մտավորականների այլ ներ-  
կայացուցիչներ: Վահան Տերյանի կյանքն

ու ստեղծագործությունը» թեմայով զե-  
կուցում տվեց բանասիրական գիտություն-  
ների թեկնածու Վ. Պարտիզոնյան:

Հուշերով հանդես եկան Դերենիկ Դե-  
միրճյանը և Ստեփան Զորյանը: Տերյանին  
նվիրված իր բանաստեղծությունը կարդաց  
Գեվորգ Էմինը: Վերջում տեղի ունեցավ հա-  
մերգ:

**ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՈՂ Ն. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԸ**

Սովետական Հայաստանի հասարակու-  
թյունը նշեց մանկական գրող Հայրապետ  
Հայրապետյանի ծննդյան 75-ամյակը:

Ն. Հայրապետյանը հայ մանկական գրա-  
կանության անվանի սերնդի ներկայացու-  
ցիչներից մեկն է: Նա տվել է գրել 1909  
թվից, «Հասկերում» տպագրելով բանաստեղ-  
ծություններ, առակներ, փոխադրություններ,  
թարգմանություններ և պատմվածքներ:

Սովետական շրջանում լայնանում է Հայ-  
րապետյանի ստեղծագործության թեմատի-  
կան: Նա ակտիվորեն հանդես է գալիս պար-  
բերական մամուլում: «Հովտեմբերիկ» ամ-  
սագրում և «Պիոներ կանչ» թերթում տպա-  
գրում է մանուկներին գրավող բազմաթիվ

բանաստեղծություններ և պատմվածքներ:  
Նրա գրչին են պատկանում Լ. Տոլստոյից,  
Ն. Տոլստոյից, Ն. Օստրովսկուց, Ս. Մարշա-  
կից, Ա. Բարտոլից և ուրիշներից կատարած  
հայերեն մի շարք թարգմանություններ:

Մանուկների սիրելի գրողը 50 տարուց  
ավել է, որ անընդհատ ստեղծագործում է  
աճող սերնդի համար՝ իր բանաստեղծական  
տաղանդը միացնելով մանկավարժական  
աշխատանքներին:

Փետրվարի 20-ին, Երևանի Պիոներների  
պալատում, տեղի ունեցավ երեկո՝ նվիրված  
մանկական գրող Հայրապետ Հայրապետյա-  
նի ծննդյան 75-ամյակին:

